

ΥΠΟΥΡΓΕΙΟ ΠΑΙΔΕΙΑΣ, ΑΘΛΗΤΙΣΜΟΥ ΚΑΙ ΝΕΟΛΑΙΑΣ

ΔΙΕΥΘΥΝΣΗ ΜΕΣΗΣ ΕΚΠΑΙΔΕΥΣΗΣ

ΕΝΙΑΙΕΣ ΤΕΛΙΚΕΣ ΠΡΟΑΓΩΓΙΚΕΣ ΓΡΑΠΤΕΣ ΕΞΕΤΑΣΕΙΣ 2025-2026

Β΄ ΤΑΞΗ ΛΥΚΕΙΟΥ

ΗΜΕΡΟΜΗΝΙΑ: 14 Μαΐου 2026

ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ ΜΑΘΗΜΑ: ΑΡΜΕΝΙΚΑ

Α΄ ΣΕΙΡΑ

ΚΩΔΙΚΟΣ ΜΑΘΗΜΑΤΟΣ: Β012

ΣΥΝΟΛΙΚΗ ΔΙΑΡΚΕΙΑ ΓΡΑΠΤΗΣ ΕΞΕΤΑΣΗΣ: 135 λεπτά

ΤΟ ΕΞΕΤΑΣΤΙΚΟ ΔΟΚΙΜΙΟ ΑΠΟΤΕΛΕΙΤΑΙ ΑΠΟ ΕΠΤΑ (7) ΣΕΛΙΔΕΣ

ΟΔΗΓΙΕΣ (για τους εξεταζόμενους)

1. Στο εξώφυλλο του τετραδίου απαντήσεων να συμπληρώσετε όλα τα κενά με τα στοιχεία που ζητούνται.
- 3. Να απαντήσετε ΟΛΑ τα ερωτήματα.**
- 4. Να μην αντιγράψετε τα θέματα** στο τετράδιο απαντήσεων.
5. Να μη γράψετε πουθενά στις απαντήσεις σας **το όνομά σας**.
6. Να απαντήσετε στο τετράδιό σας σε όλα τα θέματα **μόνο με μπλε πένα ανεξίτηλης μελάνης**. Μολύβι επιτρέπεται, μόνο αν το ζητάει η εκφώνηση και μόνο για πίνακες, διαγράμματα κ.λπ.
7. Απαγορεύεται η χρήση διορθωτικού υγρού ή διορθωτικής ταινίας.

ΣΑΣ ΕΥΧΟΜΑΣΤΕ ΚΑΘΕ ΕΠΙΤΥΧΙΑ

1 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԸՄԲՈՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (30 նիշ)

Ուշադրութեամբ կարդացեք հետևեալ բանաստեղծութիւնը եւ պատասխանեցեք հարցումներուն:



<< Կալերու Գիշեր >>

Կալերու քա՛ղցր գիշեր - գլուխը կամին վրայ դրած՝
Աշխատանքի սուրբ ոգին կալերուն մէջ կը ննջէ:
Կը լողայ մեծ Լռութիւնն աստղերուն մէջ ծովացած:
Անհունը՝ բիւր աչքերու թարթափով՝ զի՛ս կը կանչէ:

Կ՛երգեն, հեռուն, ծղրիթներ: Ջուրերուն մէջ լճակին
Կ՛ըլլայ հարսնիք մը ծածուկ նայադներու այս գիշեր:
Սիւքն յուզելով ուռնին ափերուն վրայ գետակին՝
Կ՛արթնցնէ անծանօթ լարերու վրայ նուագներ:

Ծոթրիներու բոյրին մէջ, պառկած կատարը դեզին՝
Ես կը թողում որ սրտիս դպչի ամէն մէկ ճաճանչ,
Ու կ՛արբենամ գինիովն Անհունի մեծ կարասին՝

Ուր կը ճմլուին ասուպներ քայլի մը տակ անճանաչ:

Յե՛շտ է մտքիս ընկղմիլ կապոյտին մէջ լուսալիք,
Նաւաբեկիլ - թէ հարկ է - կրակներուն մէջ վերին.
Գտնել աստղեր նորանոր, կորսուած հի՛ն հայրենիք՝
Ուրկէ ինկած հոգիս դեռ կու լայ կարօտն եթերին:

Վերանալ քա՛ղցր է ինծի թելերուն վրայ լռութեան,
Լսել միա՛յն Միջոցին շնչառութիւնն անխռով,
Մինչեւ աչքերս գոցուին քունի մը մէջ դիւթական,
Ու կոպերուս տակ կը մնայ Անհունը իր աստղերով:

<< Կալերու Գիշեր >> Դանիել Վարուժան



Ա- Կալերու գիշերին անդրադառնալով առաջին տունին մէջ ի՞նչ երեք գաղափարներու ուշադրութիւն կը դարձնէ բանաստեղծը: Ձեր խօսքը հաստատող երեք (3) նախադասութիւն գտէք եւ գրեցէք: / 5 նիշ/

Բ- Բանաստեղծը բնութեան մէջ կը լսե՞ր երգեր ու նուագներ: Ձեր խօսքը հաստատող երկու (2) տող գտէք եւ գրեցէք: Իսկ բնութեան տարբեր երեւոյթներու

միջեւ կապ կա՞յ: Գրեցէք բանաստեղծին տողերէն մէկը, հաստատելու ձեր խօսքը:
/5 նիշ/

Գ- Բանաստեղծը բնութիւնը զգալու փափաք ունի՞: Ձեր խօսքը հաստատեցէք անոր երկու արտայայտութիւնները յիշելով: Իսկ բնութեան հետ կապուած պատկերներուն մէջ Յայրենիքը տեղ ունի՞ բանաստեղծին համար: Ձեր խօսքը հաստատող տող մը գրեցէք բանաստեղծութենէն եւ ապա ըսէք թէ հեղինակը ի՞նչ զգացում ունի: / 8 նիշ/

Դ- Գտէք եւ գրեցէք այս բառերուն իմաստով հոմանիշը՝ բանաստեղծութեան մէջէն: /2 նիշ/

Մեղմ հով	
Լոյսի շող	



Ե- Չետեւեալ բառերը ճիշդ ընտրութեամբ եւ ըստ իմաստի գրեցէք ճիշդ նախադասութեան մէջ: /10 նիշ/

Տաղանդը, իրապաշտ, գեղանկարչութեան, բնութեան, նուիրեալ,
Ազատատենչ, դարաւոր, արուեստաբան, ծովանկարիչ, դրսեւորած.

Գեղանկարչութիւն

Չայկական նոր գեղանկարչութիւնը, ինչպէս գրականութիւնը, իր ծաղկումը կը սկսի 19րդ դարու կեսերուն: Չոս արագ ակնարկ մը Այվազովսկիի եւ

Բաշինջաղեանի գեղանկարչութեան:

Յովհաննէս Այվազովսկի (1817-1900) պատանութենէն (1) _____ Է

նկարչական իր (2) _____ : Ուսանած՝ Փեթերսպուրկ, Ճամբորդած՝ Իտալիա եւ այլ երկիրներ, շուտով ճանչցուած է իբր հանճարեղ (3) _____ , ամբողջ եւրոպայի մէջ:

(4) _____ Շ. Խաչատրեանի խօսքով,

<<Այվազովսկու վիպապաշտութեան հէնքը իր դարաշրջանի

(5) _____ ոգին է, տիեզերքի փոքր էակի մարդու

Չաւատը կեանքի ու (6) _____ հանդէպ>>:

Գեորգ Բաշինջաղեան (1857-1923) (7) _____ բնանկարի առաջին

վարպետն է: Ծնած Վրաստանի մէկ գաւառը՝ ուսանած է Փեթերսպուրկի

ակադեմիային մէջ: Ապրած գործած է Թիֆլիս: Ճամբորդած է շատ, շրջած է

Չայաստանը: Ճանչցուած է իբր << Չայրենիքի (8) _____

խորհրդանիշներ Արարատի ու Սեւանի (9) _____ երգիչը>>: Իր

արուեստը կը համադրէ վիպապաշտ եւ (10) _____ տարրեր:

2 ՆԻԻԹԻ ԸՄԲՈՆՈՒՄ ԵՒ ԼԵՉՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (30 նիշ)

Ուշադրութեամբ կարդացեք հետևեալ գրութիւնը եւ պատասխանեցեք հարցումներուն:



<<Պանդուխտին Կեանքը>>

Այլ տեղ չմնաց, տեղ չկայ խաներուն մէջ, լցուած են իրարու վրայ ամէն կողմէ, ամէն քաղաքէ ու գիւղէ՝ նոր մարդիկ, նոր պատանիներ. . . Նորեկ պանդուխտներու մեծ թիւը կը կազմեն 14-16 տարեկանները, խեղճուկ հագուած, ոտքերուն հինգած պատռտած կօշիկ մը, որոնք 15-20 օր լեռ ու քար, սար ու ձոր կտրելով Պոլիս հասեր են: Կը նստին օրերով, կը սպասեն ամիսներով. պարտքով ճամբայ ելած, պարտքով շոգենաւի վարձք հատուցած, հիմա ալ պարտքով պարապ կը նստին, դեռատի պատանիներ, զրկուած սիրելիներէ ու կենսական օդէն ալ:

Օր մը, խանի մը սենեակը կը մտնէի, նորահաս պատանի մը անկողնին վրայ մէկ քով կռթնած էր ձեռքը դրած գլխին եւ մտախոհ: <<Բան մը չունիմ>> ըսելով ծածկեց ինձմէ իր վշտագին սիրտը, թէեւ ես դժուարութիւն չունէի իմանալու: Մայրը թուղթ դրկած էր, հէք կին պարտքեր ու պէտքեր դրած էր զաւկին առջեւ. իսկ տղան ոչ միայն գործ չունէր, այլեւ գործելու ալ կրթուած չէր տակաւին. . .

Կը նետուին դժուարութեամբ վարպետի մը քով. տասներկու ժամ բեռնաւորեալ կ'ելլեն կ'իջնեն լաստակներէն վեր ու վար: Մէկն իր ուսին դրած է կրախառն շաղախն, ուսն ուռած ու կարմրած է, ծոծրակը այրած կիրէն. ինքը խաշած ու մաշած: Ուրիշ մը կը նետեն բեռնակրի ձողերուն տակ: Ա'ի, ես քանիներ տեսեր եմ, թարմ ու առողջ տղաներ, հսկաներ ըլլալու խմորով շինուած, որք տաժանելի

աշխատութեանց տակ սմբած մնացին, քանինէ՛ր ճնշուեցան, ճմլուեցան ու կը ճգմուին:

Հոս զանց կ'ընեմ յիշատակել այն մատաղ զոհերն ալ, զորս միշտ եւ ամէն տարի կու տանք պատերէն վար, լաստակներէն վար. . .

Ողջ մնացողները ի՞նչ կ'ընեն. . . Մեր մարտիկն ասոնց կարգէն է եւ իր պատմութիւնը մասամբ անոնցն է: Երկու տարի անցաւ որմէ ետք Պոլիս եկած է. իր տարիքն է հիմա տասներկու:

Օր մը երեկոյեան տուն դարձայ. Մարտիկ չերեւաց, զի խան գացեր էր. . . Արժանապատուութեան զգացումը զինք հոն նետեր է, աշխատիլ, ինքնութիւն ունենալ, ապրիլ եւ ապրեցնել իր քսակովն ու քրտինքովը:

<<Պանդուխտին Կեանքը>> /հատուած/ Մելքոն Կիրճեան



Ա- Առաջին պարբերութեան մէջ հեղինակը որո՞նց մասին կը պատմէ եւ ուր հասած են անոնք: Ինչպիսի՞ վիճակի մէջ կը գտնուին: / 7 նիշ/

Բ- Հեղինակը օր մը խանի մը սենեակը մտնելով որո՞ւ կը հանդիպի: Ան ինչպիսի՞ հոգեվիճակի մէջ է: Ինչո՞ւ համար, բացատրեցէք: / 7 նիշ/

Գ- Պատմութեան տղաքը ի՞նչ առօրեայով կ'ապրին, ինչո՞վ կը զբաղին, ինչպիսի՞ պայմաններու մէջ: / 7 նիշ/

Դ- Տուեալ պատմութիւնը կրնա՞յ վերաբերիլ նաեւ ժամանակակից մտահոգութիւններու: Բացատրեցէք: Իսկ այն ի՞նչ մտածումներ կրնայ տալ այսօրուայ դպրոցականներուն: / 6 նիշ/

Ե- Այս հատուածին համար գրեցէք երեք (3) տարբեր վերնագիրներ: /3 նիշ/

3 ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (40 նիշ)



Յովհաննէս Այվազովսկի

Նկարիչը իր մտածումները եւ զգացումները արտայայտած է այս նկարով: Դուք ի՞նչ կը զգաք այս նկարը դիտելով: Այն ի՞նչ մտածումներ կը ստեղծէ ձեր մէջ: Ներկայացուցէք անկէ բխող ձեր մտածումները եւ զգացումները: / Շուրջ 250 բառ/

Ուշադրութիւն դարձուցէք ուղղագրութեան եւ ձեռագիրին:

ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ

ΤΕΛΟΣ ΕΞΕΤΑΣΤΙΚΟΥ ΔΟΚΙΜΙΟΥ